

Նետեեալ Հնագիտական գրութիւն  
Մասիսի մէջ երևեցաւ:

Անոյ Հայկական սեպագրութեանց բանալին  
գոնող ներհուն արեելագէտ Տոքթոր Մարման  
էֆէնտին՝ Հայոց Տիզրանակերտ մայրաքաղաքին  
վրայ հետեեալ կարեօր և հմտալից յօդուածը  
զրելով մեզ զրկած է, որպէս զի՞ եթէ արժան  
դատինք՝ մարզմանելով լրագրոյս մէջ հրատա-  
րակենք:

Սիրով ընդունեցինք մեր Հայասէր զիտնական  
բարեկամին առաջարկութիւնը, և աչա ամբողջա-  
պէս թարզմանելով Հայ բանասիրաց ուշագրու-  
թեանը կընկրկացնենք՝ իրրև ազգային պատ-  
մութեան լուսատու զրուագ մը:

ՀԱՅՈՅ ՀԻՆ ՏԵԳՐԱՆԱԿԵՐՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ  
ԴՐԻՑ Վ. Բ. Ց.

Քրիստոսի զալուստէն մէկ դար առաջէն սկսեալ  
Յոյն և Հոռվմայեցի պատմիչք քանիցո կը յի-  
շեն Հայաստանի հին Տիզրանակերտ մայրաքաղա-  
քը, զոր Տիզրան Բ մագաւորը շինեց Սիլեկիաց-  
ւոց երկիրներուն տիրելէն ետև, և իր անունը  
տուաւ անոր: Քիչ ժամանակ ետքը՝ յիշեալ քա-  
ղաքն Հոռվմայեցւոց Լուկուզզոս զօրապետէն  
յարձակմամբ առնուեցաւ, և պարզ զիւղ մը  
դարձաւ: Սակայն յետոյ նիրոնի կայրութեան  
օրով, երբ որ Հոռվմայեցւոց Կորուղն զօրապե-  
տը Հայաստան արշաւեց, Տիզրանակերտ վերստին  
ամուր քաղաք մ' եղած էր, որ իր զուները բա-  
ցաւ յաղթականին առջւ, բայց միջնարերով զի-  
մանալով՝ յարձակմամբ առնուեցաւ: Տարի մ'  
ետքը ալ՝ Պարթեաց Մօնէղ զօրապետն յիշեալ  
քաղաքին վրայ յարձակելով՝ Հոռվմայեցւոց զօր-  
քը քանի մ' ամիս պաշարեց հոն: Այնուհետև  
այս քաղաքին անունն անհետացաւ պատմութեան  
մէջ:

Այս մայրաքաղաքին զրից վրայ Յոյն և Հոռ-  
վմայեցի պատմագրաց տուած տեղեկութիւնները  
խիստ տարտամ և մինչև իսկ Հակասական ըլլա-  
լով, ճիշտ եղբակացութիւն մ' անոնցմէ հանել  
անհնար է: Քաղղիացի հռչակաւոր աշխարհա-  
գէտը՝ Պ. Տ'Անլիլ՝ առերևոյժ նմանութենէ մը

խարուելով, Աանոյ և Տիարպէքիրի մէջ տեղը  
գտնուող Սէօրդ (Սուերդ) քաղաքը համարեց  
զայն: Քիննէյր Անդղիացի ճանապարհորդն ալ  
նոյն կարծիքն ընդունեց, բայց շուտով կը ցրի  
երբ որ խորհուի թէ Լատիններէն թէրուունէրնու-  
բառին այսի տերնու կանկը Գաղղիկերէն տերնէն  
բառին պէս չհնչուիր, այլ տերնու կը հնչուի: ու-  
րովհետեւ Յունարէն թէրուունէրնու բառէն և հայ-  
կական բնիկ Տիզրանակերտ անունէն առնուած  
է: Ասկէց զատ արզի Սէօրդ քաղաքին մէջ բնաւ  
հին շնչքերու հետք չկայ, որպէս զի հին Տիզրա-  
նակերտն ըլլալուն իրաւ նշան կարենայ ցոյց  
տրուիլ. և վերջապէս Տիզրանակերտի առջև ե-  
ղած պատերազմաց և պաշարմանց վրայ Յոյն  
և Հռոմայեցի պատմագրաց զրածները Սէօրդի  
ներկայ զրից հետ բնաւ չեն համաձայնիր:

Քաղով Հայ պատմագրաց, Մովսէս Խորենա-  
ցիէն սկսեալ ամենն ալ Տիզրանակերտ քաղաքն  
արզի Տիարպէքիր քաղաքը կը համարին, և այս  
կարծիքը բնաւ կասկած յարուցած չէ յիշեալ  
ազդին զիտնոց մէջ: Սակայն Լուկուղղոսի և Կոր-  
րուղղուի արշաւանց պատմութիւնները, որչափ  
և տալուամ ըլլան, բաւական են այս կարծեաց  
սիալ ըլլալը ցուցնելու: որովհետեւ աներկրայիլի  
է թէ Հայաստանի այս հին մայրաքաղաքը Տիզ-  
րիս զետին արեելեան կողմն և անկէ քիչ շատ  
հեռի էր:

Ուրիմն վիճաբանութիւնը բաց է տակաւին,  
մնաւանու որ ինդիոյ տակ եղած նիւթն ըստ  
բաւականին քննուած չէ զեռ:

Մեր վաղեմի բարեկամ՝ Պ. Հ. Քիէրէր, Պէր-  
լինի համազարանին դասատուն, որ փաքը Ասիոց  
ամենէն լւա աշխարհացոյց քարտէսը շնած է,  
այս վիճաբանութիւնը նորէն սկսաւ: Պէրլինի  
զիտութեանց ճեմաբանի պարբերականին մէջ  
յօդուած մը հրատարակեց՝ «Հայոց Տէրուունէրու  
հոյրուուլուն» բերեց մակազով ուր ամեն  
աշխարհացրաց և Յոյն և Հոռվմայեցի պատմա-  
գրաց բոլոր զրածները յիշելով քննեց, և այս  
քննութեամբ ձեռք բերուած արզինքնիլ ինաւ-  
մով բաղդատելէ ետև, այս եղբակացութեան  
հասաւ թէ Ժ. Կ. Թայլըր Անդղիացի ճանապար-  
հորդը որ հինա երզումի և Տիարպէքիրի Անդ-

զիական հիւպատոս է, առանց դիտնալու գտած է Տիգրանակերտի տեղն ու աւերակները Արծընսու (ի չեռումն՝ Նիկեփարիսու) գիտակին ձախ եղջրը Յիշեալ գիտակը Հիւսէյին—Քէօլի արևելեան կողմէն քիչ հեռու Տիգրիս գետը կը վաղէ Աւերակներն ալ այսօր Արծըն կը կոչուին, և Սէօրդ և Միաֆարիբն քաղաքներուն մէջ տեղը կիյնան գրեթէ հաւասար հեռաւորութեամբ:

Արծըն քաղաքին պարիսպներուն և միջնաբերդին յատակազիծը զոր Պ. Թաղըր հանած և Պ. Քիէրէր ալ օրինակած է, գոհացուցիչ կերպիւ կարգարացնէ Պ. Քիէրէրի կարծիքը, և մէք բան մը չունինք անոր վրայ աւելցնելու՝ բայց միայն քանի մը զիտուութիւններ, որք ոչ թէ կը տէարացնեն զայն, այլ մանաւանդ կը զօրացնեն:

Ապահանոս Հռոմայեցի պատմալիրը՝ Միհրդատոյ պատերազմներուն վրայ գրած պատմութեան 84 85 և 86 զլուխներուն մէջ Տիգրանակերտ քաղաքին Լուկուղանէն պաշարուելուն պատմութիւնը կընէ: Այն պատմութիւնը տեղադրական պարագաներ կը պարունակէ, զորս ի զոր կը մինտուհնք Պլուտարքոսի մէջ ։ Կերեւի որ այն հատուածները վրիուած են Պ. Քիէրէրի ուշագրութենին, և անօգուտ չըլլար զանոնք բաղդատել Պ. Թաղըրի տուած մանրամասն տեղեկագրին հետ, որ հոս քովելիս չունինք:

Թագաւոր մը շողոգորթելու փափառով՝ քաղաքաց տրուած անուններուն բաղդը միշտ կեղակարծ և անստոյդ է: Իսկ սռուցիւ նոր հիմնուած քաղաքներու անուններն այնպէս չեն, ինչպէս Աղէքանդրիա, Կ. Պոլիս, Անտիոք, և այլն. այսպիսի քաղաքաց անունները կը մնան: Բայց երբ որ պարզ մնափառութեամբ հին քաղաքի մը նոր անուն մը կը տրուի, կերեւի որ այս մնափառութիւնը կարծ կը տեւէ: Ի՞նչ եղան այն անմիւն Յուստինիանուալուալիսները, Մարկիանուալուալիսները, և այլն, որք հին և հաջակեալ քաղաքաց տրուեցան: Կերեւի թէ նշնը պատահած է նաև Տիգրանակերտի. հին Արծըն անունը Տիգրան Բ. Էն ետքն ալ կենդանի մնալով՝ մինչև այսօր պահուած է: Այս անունը ինսա հիմնակերտիս գոր Օսմանցիք տուած են պարիսպներուն սկսութեանը պատճառաւ:

Կամ մանաւանդ Արդինի քաղաքը Նաթինուատա անուն հայ թագաւորի մը մայրաքաղաքն էր, որ այն ժամանակները Բակրիսուր Բ. անուամբ ուրիշ հայ թագաւորէ մ' առնուելով այլ եցաւ, ինչպէս որ կիմանակը Մալաթիոյ մէջ Քրուսացի Վան Միւհովախ հարիւրապետին գտած յիշատակարանէն, Փրկչական 300 թուէն մինչև 624 Քիւզանդեան կայսրութեան և Պարսից մէջ եղած պատերազմներուն ժամանակ՝ Արծանէնց գաւառն իր Արծըն մայրաքաղաքին հնտ պատերազմի առարկեզ եղած էր շարունակի:

Լուսորայի Աթէնէում լրագրին 1863 փետր. 14 թուով մէկ յօդուածին մէջ Բավլինսըն գնդապետը Պ. Թաղըր հիւպատոսին ու զեսորութեանց վրայ քաղուած մը տալով, Արծըն քաղաքին ըրած այցելութիւնն ալ կը յիշէ. բայց ոչ Բավլինսըն գնդապետը, ոչ ալ Պ. Թաղըր մտքենուն չեն անցուներ այն ժամանակ թէ հին Տիգրանակերտն էր այն. Ենդչակառակն Պ. Բավլինսըն կարծեց այն ժամանակ թէ Տիգրիս գետին հարաւակողմը, այս ինքն Միջազետաց մէջ գտնուած Քէնֆըր - Կէօզի աւերակներուն տեղն էր Տիգրանակերտ քաղաքը. բայց այս կարծիքը՝ վերը յիշուած պատճառներով անընդունելի է:

Սակայն յիշեալ յօդուածն ուրիշ քանի մ' աշխարհազրական խնդիրներ ալ կը խառնէ, որոց վրայ նոյնպէս խօսած է Պ. Քիէրէր իր յիշատակազրին մէջ, և այս պատճառաւ մէք ալ կը պարտաւորնք յիշել:

Ամիդ (Տիարուէքիր) քաղաքը, զոր Հայ մատենագիրք հին Տիգրանակերտ քաղաքը կը համարին, հնուց ի վեր Ամիդ կը կ չուիր. Այս անունն արդէն նինուէի յիշատակարանաց մէջ ալ կար ինչպէս նաև Մալաթիոյ յիշատակարանին մէջ՝ Մէտայէս զրուած: Տիարուէքիր անունն Արաբները տուած են Արաբ ցեղի մ' անունէն՝ որ շրջակաները կը բնակէր. Այսու ամենայնիւ Ամիդ անունն ալ ցարդ պահուած է, ինչպէս նաև Գարա - Ամիդ անունը զօր Օսմանցիք տուած են պարիսպներուն սկսութեանը պատճառաւ:

Պ. Քիէրէրի յիշատակազրին կցուած աշխարհացոյց քարտէսը՝ խնդրոյն նիւթ եղած բոլոր երկիրն իր մէջ կը բոլանգակէ, ինչպէս նաև Վա-

նայ և Կէօլմիւկի ծովակները, զորս քանի մը հին աշխարհագէտը իրարու չետ շփոթած են: Պ. Քիւրէրի աշխարհացոյցը Վանայ ծովակին հինդ այլ և այլ անուն կուտայ. Բավլինալն զնդապիտին միշտառակազիրն ալ վեցերորդ անուն մը կուտայ, Նինուեի սեպաձև արձանապրութիւններէն քաղելով այն է Մարիի լիճ: Ճշմարիտ է որ այն ժամանակ Պ. Բավլինալն նուրբ կարգացած էր փոխանակ Մարիի, և այս սխալն ալ մեղաղիւլի չէ. վասն զի Ասորեստանեաց զրերուն մէջ ու և առ վանկերը իրարու շատ կը նշանին: Վանայ Սևապաձև զրերն ալ այնպէս են: Նուրբ Միջազետաց անունն է, որոյ մասն եղած չէ երբէք Վանայ քաղաքն և լիճը նոյն անունն է որ Ս. Գրոց բնապին մէջ ալ կը տեսնուի: Նոհարայէն, այն է «Երկու գետոց մէջ», Վանայ երկիրն և լիճն, ընդհակառակն, այն ժամանակ Մարիի կը կոչուէր, ինչպէս որ Վանայ ամենահին արձանապիրներէն զիւնիք, զօրս օրինակած և երկիցս հրատարակած են հանգուցեալ Պ. Շուշ և Պ. Լայար: Այս վերջինը 1849ին և 1850ին նինուեի և Բարելնի վրայ ըրած խուզարկութեանց նկարագրին մէջ ալ, երես 395: Նուրբ կը կարգայ, բայց նոյն երեսին մէջ դժուած ընազիրը Մուրբ է: Արդ այս անունն ուրիշ բան չէ՝ բայց եմէ Հայ պատմագրոց դրժածած Մարք անունը, զոր Մեղիս կամ Մեղացւոց կուտային, վասն զի Ասորեստանեաց իշխանութեան օրով, Մեղաստան և արեկենան Հայաստան մէկ գաւառ կը կազմէին: Երկու Մեղք կամ Մեղաստանք անունով: Երբ որ Ասորեստանեաց ինքնակալութիւնը քայքայեցաւ, զայն կազմով այլ և այլ երկիրներն ինքնազլուխ եղան և բռն Մեղաստան կամ Մարաց աշխարհն առանձին պետութիւն յ' եղաւ Տիոկէսի միապետութեան ներքեւ, իսկ Արևմտեան Մեղաստան, այն է Երևեկեան Հայաստան, որ Վանայ լընի շրջակայ երկիրներէն կը բաղկանար, ուրիշ անկախ պետութիւն մը կազմեց Բավլիստոր Ար իշխանութեան ներքեւ Մարիի անունով, որ յետոյ Պիտիմայի փոխուեցաւ:

Հայաստանի զեղեցիկ աշխարհացոյցը հրատարակելէ ետև Պ. Քիւրէրի ձեռք ձգած հին դրութեանց վրայ եղած քննութիւններն ու միշտառ-

նութիւնները քանի մը փոփոխութիւններ ու յառ ւելուածներ յառաջ բերին, որք այն աշխարհացոյցն նոր տպագրութիւնն անշուշտ պիտի կատարելագործեն, և նոր լըս մը պիտի սփռեն Վանայ հին միշտառակազրաց վրայ՝ որք այն երկիրներուն կը վերաբերին:

Ասոնցմէ քանի մ' օրինակ յիշենք:

Արկիսթի թագաւորը (Քրիստոնէ 630 տարւոյ չափ առաջ) արշաւանք մ' ըրաւ Եւլիանի, Եւրիանի և Անսարի կոչուած երկիրներուն վրայ ուր Եւրարիւկիլու քաղաքին տիրեց, յետոյ Թուրիւրէրա, Գիւրա և ուրիշ (անունն աւրուած) գաւառ մը նուածեց: Պ. Քիւրէրի միշտառակազրին վրայ յաւելեալ աշխարհացոյցին օվնութեամբ ինչպէս նաև նոյն միշտառակազրին 197 երեսին մէջ նշանակուած ծանօթութեամբ կը նաև զրելմէ քայլ առ քայլ յաղթական բանակին ընթացքին հետևիլ Վանայ ծովակին արեմանեան կողմէն ճամկայ ելնելով, և վերին Եփրատայ եղելքէն շարունակելով կը տեսնենք նախ Եւլիանի երկիրը, որոյ մայրաքաղաքը, զօր Արկիսթի թագաւորը նուածեց, Տարանի կը կոչուէր ներեսի թէ մայրաքաղաքին անունը յետոյ բոլոր գաւառին տրուեցաւ, որ Տակիստոփ տարեզրութեանց մէջ (Գիրք Ժ. Պ. Պ. 24) Թաւրանթիոմ և Հայ պատմագրոց մէջ Թարոն կամ Տարոն կը կոչուի, և վերին Եփրատայ հիւսիսակողմն ու Հարաւակողմը կիշեալ: Արդի Մուշ քաղաքն այս գաւառին մէջ տեղն է: Արնայ ըսուիլ նաև թէ գաւառին հին անունը տակաւին պահուած է Աւանի բերքին անուան մէջ, որ Մարաթոնի պատմութեան նայելով (երես 524), այն քաղաքներէն մին էր, ուր Տիգրան և Արտավազդ թագաւորներն իրենց զանձերը կը պահէին: Ճշմարիտ է որ եմէ Մարաթոնի ըսուծը լաւ կը հասկնանք, այս քաղաքն աւելի արեկեան կողմը կը զնէ: Բայց զիւնիք ալ որ անոր Հայաստանի վրայ ըրած նընկարագրութիւնը ճիշտ չէ, ինչպէս Փաքք Ասոնց վրայ ըրածն ալ: Եւ շատ հաւանական է որ Հայաստան անձամբ տեսած չէ երբէք, որովհետեւ, եմէ տեսած ըլլար, Տիգրանակերտ քաղաքը Ալլարաստանի մօտ չէր զներ:

Վերջիշեալ ցանկին մէջ անուանեալ երկորդ  
երկիրն՝ Խ-Շ-Ե-Ն-Ի անծանօթ է մեզ. բայց անոր  
հաւանական տեղը Հայաստանի այն մասն է որ  
տակաւին պայօք ալ բոլորովին անծանօթ է և  
չէ քննուած:

Երրորդ երկիրն է Անդախիմ, ուր առանց աշ-  
խատութեան Պաղոմէոս Յօյն պատմագրին (Գիրք  
Ե. զ. 13—Յ. 18) Ժիշած ԱՆԴԻՔՆԻ գաւառը կը հաս-  
կցուի Եփրատայ և Վելին Տիգրիսի մէջ տիզը:

Երկիսթի թագաւորն իւր երկրակալութիւնը  
մինչև Խոդաբարութիւնը քաղաքը քշեց: Այս անունը  
բարդ է. իւր կամ էւր կրնայ նշանակել քա-  
ղաք կամ (կերտ) կերտուած \*): Ուրիշն կը նշա-  
նակէ Եւպարիսի քաղաք կամ կերտուած, Եւպա-  
րիւ շատ կը նմանի Եփրատայ Ասորերէն անուա-  
նը, բայց առ անց ասոր կարեղութիւն տարու՝  
կրնայ աւելի հուանականաբար այս անունով մարդ  
մը նշանակել: Բայց ինչ որ ալ ըլլոյ: Հայերէն  
Պալահովիտ անուան կը պատասխանէ. վասն զի  
ւ և գրերը Հայերէնի մէջ թէ այն ժամանակ և  
թէ սյոօր Ծորդ են, և իրարու տեղ կը գործա-  
ծուին. Ուստի տարակոյս չկայ որ արդի Բալու  
քաղաքն այս գաւառին յիշատակը կը պահէ մին-  
չև այսօր:

Հետեւեալ անունն ալ Թիւրիւրիւրա ճշղիւ  
հայ պատմագրաց և աշխարհագրաց Ժիշած Տու-  
րուրերան գաւառին անունն է, որ Անայ ծո-  
վակին և Պինկէօլ լեռան մէջ տեղը կիմայ,  
յորմէ կ'ապացուցուի թէ Երկիսթի թագաւորը,  
Քալուի տիրելէ ետե՝ Վելին Եփրատայ աջ եղ-  
րէն ետ գործած է:

Հետեւեալ անունները կրծատ են և բաղաւ-  
տութեան ապահով հիմ մը չեն ընծայեր. բայց  
և այնպէս կրնայ ենթաղրուիլ թէ կրծատեալ  
Քիւրա: անունը Հարը կամ Խորիսուու-  
նիք նահանգները նշանակէ, որոց երկուքն ալ  
Տուրուրերան գաւառին մէջ են:

Հոս կաւարտնիք մեր յօդուածը, բայց յի-  
շուած օրինակները կը հաստատին թէ հուց  
միայած շենքերն և հին պատմագրաց վկայու-

թիւնները զիրար կը բացասարեն. բայց կը հաս-  
տատին նաև թէ աւելի կատարելապէս հաս-  
կցուելու համար պէտք է որ Հայաստանի երկրը  
մինչև հիմա եղածէն աւելի կատարեալ և աւելի  
ճիշգ կերպով քննուի:

Ա. Տ. ՄՕՐԹԱԿԱՆ.  
Մասին, թ. 1472, գեկանք. 8:

## ՅԵՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ

Տիրապետաթիւնը գործունեայ և զարգացած  
մարին է պատկանում:

Ազգային տարրերից ամենազօրը և կենզա-  
նապաճը լիզուն է:

Մ. Ա. Միանսարեանց տոպազը թիւնների զի-  
ւը Տիֆլիս (Tiflis) նորա սեփհական տանը, հա-  
յոց Վանքի Մէծ և Փաքր փողոցների անկիւ-  
նում, Մայր եկեղեցւոյ հանդէպ, Ս. Պէտէրբուրգ-  
իւր կացարանում, այսպիսի հանցէով:

Վъ С. Петербургъ, на Михайловской площади,  
домъ № 2—3, Жербинн, кв. № 5, Михаилу  
Месроповичу Мансарову, — Russie, S. Pétersbourg,  
place Michel, maison № 2—3, de Cerbinne, log. №  
5, Michel Miansarof (Miansariantz) — Ս. Պէտէր-  
բուրգ-իւր (ոչ Տիֆլիսէն) Ըուսաց տէրութեան ա-  
մենայն քաղաքները առաքելով, ճանապարհի  
(փոստայի), ծախսով հանգիրձ, և Պէտէ զրավա-  
ճառ Խուտիսան թշու մօտ, Պետա, Հազզապուրի  
անց (պասաճ), № 32, — Constantinople, Grand Rue de Péra,  
Passage Hazzopulo, № 32, և միւս Հայ զրավա-  
ճառների մօտ:

Քառու Հայէնիւն, ընդարձակ երգարան հանդիք  
զանազան յաւելուածներով, ծանօթութիւննե-  
րով և Հայախօս առածներով (Lyre arménienne—  
recueil des chants): Ս. Պետէրբուրգ. 1868:  
8 ժալ, էջ 712: Հայկական Քնարի այսէնիւններ-  
ունիւն առանձին տպած 1870 թ., 8 ժալ, էջ 32:  
երկուոր միասին.

մի օրինակ 1 ս. 30 կ. Օսմ. 7 ֆր:  
հինգ օրին. 5 ս. — " 30 ֆր.

Խնամական երեխայր (Komb,— éducation  
des enfants): — մարմական և բարօյական, շարա-

(\*) Վելինն առաւել չիւս է: